«Պատմության մրցույթներ 4.0: Պատմության քննադատական դասավանդման գործիքակազմ» ծրագիր

Ուղեցույց մասնակից ուսուցիչների համար

Բովանդակություն

Ծրագրի հակիրճ նկարագրություն 2

Ծրագրի գործողությունները ուսուցիչների և աշակերտների համար 3

Վերապատրաստում 3

Մասնակցություն դասընթացին և ծրագրին. հայտի ներկայացում 4

Հետազոտական նախագծերի իրականացում և մրցույթին նախապատրաստում 5

Գարնանային դպրոց 2024 6

Պատմության մրցույթի համար աշխատանքների ընդունում, մասնագիտական ժյուրիի կողմից աշխատանքների գնահատում և հաղթողների ընտրություն 6

Մրցանակաբաշխություն և աշխատանքների ցուցադրություն 7

Մասնակցության տարբեր միջոցառումների 7

Ժամանակացույց 8

Հետադարձ կապ 9

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մասին 9

«Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ մասին 10

«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի մասին 10

Supported by Federal Foreign Office

Ծրագրի հակիրճ նկարագրություն

Իրականացնող կազմակերպություն՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ

Գործընկեր կազմակերպություններ՝ «Հազարաշեն ազգաբանական հետազոտությունների կենտրոն» ՀԿ, «Մասնակցային դպրոց» ՀԿ

Վայր՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Կապան

Ժամանակահատված՝ Հունիս 2023 – դեկտեմբեր 2024

«Պատմության մրցույթներ 4.0: Պատմության քննադատական դասավանդման գործիքակազմ» ծրագիրն իրականացվում է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի գրասենյակների կողմից Գերմանիայի Քյորբեր հիմնադրամի հետ համատեղ՝ Գերմանիայի արտաքին գործերի դաշնային նախարարության ֆինանսական աջակցությամբ: Հայաստանում ծրագրի գործընկերներն են «Հազարաշեն ազգաբանական հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ն և «Մասնակցային դպրոց» ՀԿ-ն:

Այս ծրագիրը հանդիսանում է 2021-2022թթ. իրականացված «Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0» ծրագրի երկրորդ փուլը: Առաջին փուլի շրջանակում Հայաստանում վերապատրաստվել է 42 պատմության ուսուցիչ, իսկ մրցույթին մասնակցել են 32 ուսուցիչ իրենց աշակերտական խմբերով (շուրջ 250 աշակերտ)՝ ներկայացնելով 46 հետազոտական աշխատանք: Մասնագիտական ժյուրիի կողմից գնահատման արդյունքում տարբեր անվանակարգերում հաղթող են ճանաչվել 14 աշխատանք: Մրցույթում հաղթող ճանաչված 11 աշակերտ մասնակցել են 4-օրյա երիտասարդական ճամբարի Հայաստանում, իսկ 4 աշակերտ 2023թ. Պրահայում մասնակցել են ամենամյա EUSTORY միջազգային երիտասարդական գագաթնաժողովին: Մրցույթում լավագույն արդյունքներ ցույց տված 6 ուսուցիչներ հնարավորություն են ունեցել մասնակցելու փորձի փոխանակման միջազգային աշխատարանի Վրաստանում՝ ծրագրում ներգրավված մյուս երկրների ներկայացուցիչ ուսուցիչների հետ:

Երկու փուլերում էլ ծրագրի գործընկերը Գերմանիայում գործող Քյորբեր հիմնադրամն է, որի ներքո գործող EUSTORY ոչ ֆորմալ ցանցի կողմից 2001թ. մեկնարկել է «Պատմության մրցույթներ» նախաձեռնությունը: Ցանցը միավորում է ավելի քան 20 երկրների 30 քաղաքացիական հասարակության կազմակերպություններ: Հայաստանը ծրագրի առաջին փուլի հաջող իրականացումից հետո 2023թ. պաշտոնապես միացել է ցանցին:

Supported by Federal Foreign Office

Ծրագրի նպատակն է հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում պատմություն առարկայից քննադատական մտածողության զարգացումը՝ նախագծային ուսուցման և դասավանդման ու ուսումնառության նոր մեթոդների և ռազմավարությունների ներդրման միջոցով: Այս մոտեցմամբ ***մասնակիցները ինքնուրույն ուսումնասիրում են իրենց միջավայրի պատմությունը՝ տեղեկատվություն ստացողից դառնալով տեղեկատվություն ստեղծող:***

Ծրագրի մասնակից բոլոր 4 երկրների համար այս փուլի ընդհանրական թեման է **«Ուսումնասիրելով պատմության վրա հիմնված քարոզչությունը Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում»**, իսկ Հայաստանի ազգային թեման կհայտարարվի 2024թ. տարեսկզբին՝ մրցույթը հայտարարելուց առաջ:

Ծրագրի գործողությունները ուսուցիչների և աշակերտների համար

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ հիմնական գործողությունները ուսուցիչների և աշակերտների համար.

Ուսուցիչների վերապատրաստում

Երևանի, Գյումրու, Վանաձորի, Դիլիջանի և Կապանի հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարաններում «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հայ եկեղեցու պատմություն» առարկաները դասավանդող ուսուցիչների համար կանցկացվի վերապատրաստում պատմության վերաբերյալ հետազոտություններ իրականացնելու և տարբեր աղբյուրների հետ աշխատանքի թեմայով (***դեկտեմբեր 2023թ.***):

Դասընթացի թեմա և տևողություն	➢ Պատություն առարկայի դասավանդում նախագծային և հետազոտական մեթոդների կիրառմամբ ➢ Աղբյուրների հետ աշխատանք պատմության վերաբերյալ հետազոտություն իրականացնելիս ➢ Նախագծերի ներկայացման ձևաչափեր ***2 օր, դեմառդեմ*** *Դասընթացի ծրագիրը ներկայացվել է ԿԳՄՄՆ հաստատման:*

2023թ. դեկտեմբեր ամսին կանցկացվի 4 դեմառդեմ դասընթաց՝ վերոնշյալ յուրաքանչյուր տեղանքում 1 դասընթաց (Դիլիջանի ուսուցիչները մասնակցելու են Վանաձորում կայանալիք դասընթացին):

Supported by Federal Foreign Office

Դասընթացներին մասնակցության բոլոր ծախսերը, այդ թվում՝ տրանսպորտ, սնունդ, նյութեր և այլն, հոգում է ծրագիրը:

Դասընթացին մասնակցությունը պարտադիր է ծրագրի հետագա փուլերում ներգրավվելու, մասնավորապես մրցույթին մասնակցելու համար, սակայն դասընթացին մասնակցությունը որևէ կերպ չի պարտադրում մասնակից ուսուցիչներին ներգրավել ծրագրի մյուս փուլերում:

Մասնակցություն դասընթացին և ծրագրին. հայտի ներկայացում

Դասընթացին մասնակցությունը բաց է **Երևանի, Գյումրու, Վանաձորի, Դիլիջանի և Կապանի** հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարաններում «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հայ եկեղեցու պատմություն» առարկաները դասավանդող ուսուցիչների համար:

Ս.թ. նոյեմբերի 15-ին ժամը 15:00-ին տեղի կունենա առցանց տեղեկատվական հանդիպում դասընթացին և ծրագրին մասնակցությամբ հետաքրքրված բոլոր ուսուցիչների համար, որի ընթացքում ծրագրային թիմը կներկայացնի հիմնական գործողությունները, ինչպես նաև կպատասխանի մասնակիցների հարցերին:

Տեղեկատվական հանդիպմանը կարող եք միանալ հետևյալ հղումով.

https://us02web.zoom.us/j/86997041614?pwd=Z2Z4TDhPajRKL3UwUVFmUjZEL3F4dz09

Meeting ID: 869 9704 1614
Passcode: 648932

Առցանց հանդիպումից հետո բոլորին կտրամադրվի դասընթացին և ծրագրին գրանցվելու էլեկտրոնային հայտադիմում: Գրանցվելուց հետո բոլոր ուսուցիչները կստանան հավելյալ տեղեկատվություն դասընթացի բովանդակային և կազմակերպչական հարցերի վերաբերյալ:

Վերապատրաստման ավարտին ծրագրի հետագա փուլերին՝ մասնավորապես պատմության մրցույթին մասնակցությամբ հետաքրքրված բոլոր ուսուցիչները պետք է ձևավորեն **5-7 հոգանոց աշակերտական խմբեր** և նրանց հետ միասին որոշեն իրենց հետազոտական նախագծի թեման՝ սահմանված ազգային հովանոց թեմայի[1] շրջանակում, կազմեն ***հետազոտական նախագծի պլանի*** նախնական տարբերակը (*ձևանմուշը կտրամադրվի*): Դասընթացավարների դիտարկումների հիման վրա թիմերը պետք է վերանայեն և վերջնականացնեն հետազոտական պլանները: Վերանայումից

[1] 2024թ. հունվարին կհայտարարվի մրցույթի ազգային թեման, որի շրջանակում ընտրված թիմերը կսահմանեն իրենց հետազոտության թեման:

Supported by Federal Foreign Office

հետո հետազոտական նախագծերի անհամապատասխան լինելու դեպքում թիմի մասնակցությունը մրցույթին կարող է մերժվել:

Աշակերտական խմբի կազմում կարող են ներգրավվել 9-11-րդ դասարանների աշակերտներ: 8-րդ և 12-րդ դասարանների աշակերտները ևս կարող են ներգրավել թիմում՝ ըստ ուսուցչի հայեցողության: Աշակերտական խմբերի ներգրավման մոտեցումները կազմում են հետազոտական պլանի կարևորագույն մասը:

Ներկայացված հետազոտական նախագծերի պլանների հիման վրա կընտրվեն 25-30 խումբ, ովքեր կշարունակեն իրենց մասնակցությունը ծրագրին և կիրականացնեն հետազոտություն՝ ըստ հաստատված պլանի:

Ծրագրի առաջին փուլի լավագույն 6 հետազոտական պլաններին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով. bit.ly/3XIdHpu :

Հետազոտական նախագծերի իրականացում և մրցույթին նախապատրաստում

2024թ. հունվար – փետրվար ամսիներին կանցկացվեն առցանց հանդիպում – աշխատարաններ մրցույթին մասնակցող բոլոր թիմերի համար, կքննարկվեն ներկայացված հետազոտական պլանները: Այնուհետև կհայտարարվի հետազոտական նախագծերի մեկնարկը:

Աշակերտական խմբերը կունենան ***շուրջ 3 ամիս ժամանակ*** հետազոտական նախագծի վրա աշխատելու համար: ***2024թ. մարտ-մայիս*** ամիսներին աշակերտական խմբերը ուսուցիչների ղեկավարությամբ և ուղղորդմամբ կիրականացնեն հետազոտական նախագծերը՝ ըստ ներկայացված և հաստատված պլանների: Ուսուցիչները պետք է խմբի անդամների մասնակցության հստակ մոտեցումներ ունենան՝ հնարավորություն ստեղծելով թե՛ խմբային, և թե՛ անհատական աշխատանքի համար:

Աշակերտները պետք է ի սկզբանե տեղեկացված լինեն, որ արդյունքում իրենցից ակնկալվում է ներկայացնել արված հետազոտության մասին պատմող որևէ նյութ՝ էսսեյ, տեսաֆիլմ, փոդքասթ, այլ (բացառությամբ պաստառի): Աշակերտական խումբը կարող է ներկայացնել մեկ համատեղ աշխատանք: Այդուհանդերձ, աշակերտներից յուրաքանչյուրը ցանկության դեպքում կարող է ներկայացնել նաև անհատական աշխատանք:

Մրցույթի ավարտին կկազմակերպվի կատարված աշխատանքների մասին պատմող **այլընտրանքային ցուցահանդես**: Անկախ հետազոտության արդյունքները ներկայացնելու համար ընտրված ձևաչափից՝ բոլոր թիմերը պետք է պատրաստեն նաև աշխատանքի մասին պատմող կոլաժ/պաստառ, որը կներկայացվի ցուցահանդեսին:

Supported by Federal Foreign Office

Հետազոտությունների իրականացման ողջ ընթացքում ծրագրի թիմը, դասընթացավարները ու նախորդ փուլի լավագույն ուսուցիչները կաջակցեն խմբերին իրենց խորհրդատվությամբ:

Գարնանային դպրոց 2024

2024թ. ապրիլ ամսին (հետազոտությունների իրականացման ընթացքում) յուրաքանչյուր տեղանքում կանցկացվի մեկ 1-օրյա աշխատարան ծրագրում ներգրավված բոլոր ուսուցիչների և աշակերտների համար, որի ժամանակ թիմերը կծանոթանան իրար հետ և միմյանց կներկայացնեն իրենց աշխատանքների ընթացքը, ինչպես նաև կմասնակցեն մի շարք ինտերակտիվ աշխատարանների:

Պատմության մրցույթի համար աշխատանքների ընդունում, մասնագիտական ժյուրիի կողմից աշխատանքների գնահատում և հաղթողների ընտրություն

Պատմության մրցույթի համար աշխատանքների ընդունումը կմեկնարկի **2024թ. մայիսի 1-ից**:

Մայիսի 1-30 -ը ժամանակահատվածում թիմերը պետք է ամփոփեն հետազոտական նախագծերը և ներկայացնեն իրենց աշխատանքները՝ ներբեռնելով դրանք ծրագրի կայքում՝ https://dvv.hazarashen.am/ կամ ուղարկելով asryan@dvv-international.am և nona.poghosyan1@gmail.com: Ինչպես նշված է վերևում, աշակերտական խումբը կարող է ներկայացնել մեկ համատեղ աշխատանք: Այդուհանդերձ, ցանկության դեպքում, աշակերտական խմբի յուրաքանչյուր անդամ կարող է մրցույթին ներկայացնել հետազոտական նախագծից բխող իր անհատական աշխատանքը:

Մրցույթին ներկայացված աշխատանքների գնահատումը կիրականացվի ծրագրի իրականացնողներից, դասընթացավարներից և անկախ փորձագետներից կազմված մասնագիտական ժյուրիի կողմից: Աշխատանքները կգնահատվեն հետևյալ չափանիշների հիման վրա.

- Աշխատանքը ամբողջականորեն ներկայացնում է ընտրված թեմայի շրջանակներում կատարված հետազոտական նախագիծը – ***առավելագույնը 10 միավոր:***
- Հետազոտության համար ընտրված ձևաչափը լավագույնս է արտացոլում նախագծի բովանդակությունը -***առավելագույնը 5 միավոր:***
- Աշխատանքի հիմքում ընկած հետազոտական մասը տեսանելի է, հիմնավոր, հավաստի աղբյուրների վրա հիմնված, տեղեկատվության հավաքագրման համար օգտագործված են առնվազն 3 աղբյուր – ***առավելագույնը 15 միավոր***:
- Հավաքագրված տեղեկատվությունը պատշաճ վերլուծվել է -***առավելագույնը 10 միավոր***:
- Հետազոտական նախագծի արդյունքները ներկայացված են կրեատիվ/ստեղծագործ մոտեցումներով – ***առավելագույնը 5 միավոր***:

Supported by Federal Foreign Office

Նախատեսվում է ունենալ մի շարք անվանակարգեր, այդ թվում.
1. Լավագույն խմբային աշխատանք
2. Լավագույն անհատական աշխատանք
3. Լավագույն հետազոտական աշխատանք
4. Ժյուրիի անդամների և/կամ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի համակրանք
5. Այլ, եթե ժյուրին նման անհրաժեշտություն տեսնի։

Մրցանակաբաշխություն և աշխատանքների ցուցադրություն

Մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը տեղի կունենա 2024թ. հուլիսին։

Մրցանակային տեղեր զբաղեցրած աշխատանքներ ներկայացրած թիմերը կստանան **մրցանակ**, իսկ բոլոր թիմերն ու ուսուցիչները կստանան մասնակցության վկայական։

Մրցանակաբաշխության միջոցառման ժամանակ կկազմակերպվի նաև հետազոտական աշխատանքների **այլընտրանքային ցուցահանդես՝ կոլաժների և պաստառների հիման վրա**։

Ներկայացված բոլոր աշխատանքները կհրապարակվեն հատուկ ծրագրի համար ստեղծված կայքում. https://dvv.hazarashen.am/ :

Մասնակցություն տարբեր միջոցառումներին

Մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերի ուսուցիչները (5 ուսուցիչ) կմասնակցեն 2024թ. օգոստոսին Վրաստանում կայանալիք փորձի փոխանակման աշխատարանին, իսկ թիմերի անդամ աշակերտները (4-5 աշակերտ) հնարավորություն կունենան մասնակցելու միջազգային երիտասարդական համաժողովի 2024թ. հոկտեմբերին։

Supported by Federal Foreign Office

Ժամանակացույց[2]

1. Առցանց տեղեկատվական հանդիպում հետաքրքրված ուսուցիչների համար	Նոյեմբերի 15, ժամը 15:00
2. Ուսուցիչների վերապատրաստում	Դեկտեմբեր, 2023
3. Ուսուցիչների կողմից ծրագրին մասնակցության հետաքրքրության հայտի ներկայացում	2023թ. դեկտեմբերի վերջ
4. Ուսուցիչների կողմից աշակերտական թիմերի ձևավորում, նրանց հետ հետազոտական թեմայի քննարկում և նախնական պլանի կազմում	Հունվար 2024թ.
5. Հետազոտական նախագծերի պլանների ներկայացում և վերջնականացում	Հունվար - փետրվար, 2024
6. Առցանց տեղեկատվական հանդիպում ուսուցիչների և աշակերտների համար	Փետրվար, 2024
7. Հետազոտական աշխատանքների իրականացում	Մարտ– մայիս, 2024
8. Գարնանային դպրոց / մարզային աշխատարաններ	Ապրիլ, 2024
9. Մրցույթի հայտարարում	Մայիսի 1, 2024
10. Մրցույթի շրջանակում հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում	Մայիսի 30, 2024
11. Ժյուրիի կողմից աշխատանքների գնահատում	Հունիս, 2024
10. Մրցույթի արդյունքների ամփոփում, մրցանակաբաշխություն և ներկայացված աշխատանքների ցուցադրություն	Հուլիս, 2024
11. Ուսուցիչների համար փորձի փոխանակման միջազգային աշխատարան (Վրաստան)	Օգոստոս, 2024
12. «Պատմության մրցույթներ» երիտասարդական ճամբար / համաժողով	Հոկտեմբեր, 2024

[2] Ժամանակացույցում հնարավոր են որոշ փոփոխություններ՝ ծրագրի ընթացքից կախված:

Supported by Federal Foreign Office

Հետադարձ կապ

Հարցերի և պարզաբանումների համար կարող եք կապ հաստատել ծրագրի կազմակերպչական թիմի հետ՝ հետևյալ էլեկտրոնային հասցեներով.

Տաթև Ասրյան asryan@dvv-international.am

Նոնա Պողոսյան nona.poghosyan1@gmail.com

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մասին

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ (Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտ) կազմակերպությունը հիմնվել է 1969թ. Գերմանիայում: Այն ցանցային միջազգային հասարակական կազմակերպություն է, որը գործում է ավելի քան 30 երկրում՝ նպաստելով ողջ կյանքի ընթացքում կրթության իրավունքի և հնարավորությունների իրացմանը:

Հայաստանում կազմակերպության մասնաճյուղը բացվել է 2002թ.-ին: Ավելի քան 20 տարվա գործունեության ընթացքում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը աշխատել է ՀՀ-ում Լրացուցիչ և շարունակական կրթության (ԼՇԿ) և Մեծահասակների ուսումնառության ու կրթության (ՄՈՒԿ) ջատագովության և զարգացման ուղղությամբ ամենատարբեր եղանակներով և միջոցներով, որոնց թվում՝

- ✓ ՄՈՒԿ և ԼՇԿ բնագավառներում քաղաքականության զարգացմանն աջակցություն հետազոտությունների իրականացման, փորձի փոխանակման այցերի կազմակերպման, փորձագիտական քննարկումների և հանդիպումների հարթակների ստեղծման, գիտաժողովների կազմակերպման, միջազգային հարթակներում ՀՀ ներկայացվածության ապահովման միջոցով:
- ✓ ՀՀ-ում 4 մեծահասակների կրթության կենտրոնների (ՄԿԿ) ստեղծում և ինստիտուցիոնալ աջակցություն դրանց (Շիրակ, Գեղարքունիք, Սյունիք, Տավուշ):
- ✓ ՄՈՒԿ/ԼՇԿ բնագավառի մասնագետների կարողությունների շարունակական զարգացում և վերապատրաստումներ:
- ✓ Մեծահասակների կարողությունների զարգացմանն ու անձնային աճին ուղղված մի շարք թեմատիկ ծրագրերի իրականացում ՀՀ ողջ տարածքում (Քաղաքացիական կրթություն, Մեդիագրագիտություն մեծահասակների համար, Բանտային կրթություն, Թանգարանային կրթություն, Տեղահանվածներին աջակցության ծրագրեր, Մշակութային կրթություն և այլն):

Supported by Federal Foreign Office

CIVIL SOCIETY COOPERATION

2021թ.-ից ի վեր Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը իրականացնում է «Պատմության մրցույթներ» ծրագիրը՝ դառնալով միջազգային ցանցի անդամ:

«Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ մասին

«Հազարաշեն ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն» ՀԿ մասնագիտացած է մարդաբանական, ազգագրական, բանավոր պատմության հետազոտության և կրթության ոլորտում: Կազմակերպությունը ստեղծվել է մի խումբ մարդաբանների կողմից 1997 թվականին: «Հազարաշեն» ՀԿ աշխատանքները ներառում են բանավոր պատմության, մշակութային ժառանգության, ծեսերի և սովորույթների, միգրացիայի, փախստականների, ազգային փոքրամասնությունների, ինքնության, հիշողության քաղաքականության ուսումնասիրություն և այլն: Կազմակերպության կողմից իրականացվող մեկ տասնյակից ավելի ծրագրեր վերաբերում են պատմությանն ու պատմական հիշողությանը, ինչպես նաև հայերի ավանդական և ժամանակակից մշակույթին: Մինչ կազմակերպությունը կենտրոնանում է հետազոտությունների վրա, այն նաև նախաձեռնում և իրականացնում է մշակութային և կրթական տարբեր ծրագրեր:

«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի մասին

«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամը ստեղծվել է 2021թ.-ին Մասնակցային դպրոց նախաձեռնության հիման վրա, որն իրենից ներկայացնում է 20 դպրոցների և նրանց մասնագետների ցանց, որոնք վերապատրաստում են հանրակրթական դպրոցների ուսուցիչներին և տնօրեններին մասնակցային մշակույթի և կարողունակությունների վրա հիմնված ուսուցման վերաբերյալ: Հիմնադրամն արագորեն զարգանում է և ներկայումս ներկայացված է Հայաստանի յոթ մարզերում 85 պրոֆեսիոնալ դասավանդողների թիմով: 2021-2022 թվականներին «Մասնակցային դպրոցը» վերապատրաստել է ավելի քան 1500 ուսուցիչների՝ օգտագործելով իր կողմից ստեղծված և պետական հավաստագրում ստացած մոդուլը ուսուցիչների և տնօրենների համար (մասնագիտական զարգացում, օրենսդրություն, հոգեբանություն, ներառականություն և այլն): «Մասնակցային դպրոցի» աշխատանքային խումբը 2018-2020 թվականներին ակտիվ դեր է խաղացել կրթության պետական նոր չափորոշիչների մշակման գործում և մեծապես ջատագովել է կարողունակությունների վրա հիմնված կրթության մոտեցմանը: «Մասնակցային դպրոցը» հրապարակել է մի շարք ուսումնական նյութեր, ինչպիսիք են պետական հավաստագրում ստացած «Մասնակցային դպրոց» ուսուցչի ձեռնարկը:

Supported by Federal Foreign Office

Ներկայումս հիմնադրամը ներգրավված է կրթական նոր չափորոշիչների վրա հիմնված դպրոցական դասագրքերի մշակման աշխատանքներում։

Supported by Federal Foreign Office